

ՔԱՐՈՋԵՐՈՍԱԿԱՆ

ՄԻՈՆ ԱՔԵՂԱՅ ԹԱՔՈՒՇԵԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՕՍՈՒԱԾ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 110-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԻՆ՝
ՍՐՔՈՑ ՅԱԿՈՔԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ
(24 Ապրիլ, 2025)

«Մեռած էինք և յարութիւն առինք»

Սիրելի ժողովուրդ Հայոց,

Այսօր մեր աղօթքներն առ Աստուած կը բարձրանան առաւել զգայնութեամբ եւ յուզումով, քանզի սովորական օր մը չէ այս: Այսօր մեր նահատակներու, մեր սրբադասուած ազգի ցաւի, մեր վերապրումի եւ մեր հաւատքի յաղթանակի յիշատակին օրն է:

Այսօր կը լրանայ 110-ամեակը Ապրիլ քսանչորսի ահաւոր արհաւիրքին՝ Հայոց Յեղասպանութեան, սակայն այդ տարիները պէտք չէ դիտենք միայն որպէս պատմական չարիք: Անոնք մեր հաւաքական խաչելութեան, բայց նաեւ մեր հաւաքական յարութեան խորհրդանիշն են:

Այսօր Սրբոց Յակոբեանց այս սուրբ տաճարին մէջ հաւաքուած ենք աղօթելու արդարութեան վերահաստատման, մեր ազգի հերոսութեան եւ յարատեւութեան համար՝ խնդրելով Հայոց Յեղասպանութեան ընթացքին վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց նահատակուած սուրբերու բարեխօսութիւնը:

1915-ին եւ յաջորդ տարիներուն, մէկուկէս միլիոն Հայ զոհուեցաւ Օսմանեան իշխանութեան ծրագրուած բնաջնջման: Բայց այդ մէկուկէս միլիոնը պարզ թիւ մը չէ: Այդ մէկուկէս միլիոն հայերն ունէին անուն, ունէին սէր, ունէին ընտանիք, հոգի եւ ամենակարեւորը՝ հաւատք՝ Քրիստոնէական հաւատք, որուն համար ալ մեծ ու պզտիկ առանց զատողութեան եւ առանց խղճմտանքի սուրի կը մատնուէին: Եւ այժմ, միայն Հայ եւ Քրիստոնեայ ըլլալու համար:

Սակայն ինչպէս խաչը մահուան գործիքէն դարձաւ փրկութեան նշան, այնպէս ալ Յեղասպանութիւնը դարձաւ մեր վերապրումի, մեր ազգի յարութեան, վերջապահութեան խորհրդանիշ: Հայը տարուեցաւ անապատ՝ տանջուելու, բայց հոն յոյս սերմանեց, վտարուեցաւ իր հայրենիքէն, սակայն իբրեւ անմոռուկ՝ տարածուեցաւ աշխարհի բոլոր անկիւնները, կառուեց եկեղեցիներ, դպրոցներ, մշակութային դարբնոցներ:

Հայը դաւանափոխել փորձեցին: Առաջին քրիստոնեայ ազգը փորձեցին աստուածուորաց ընել, սակայն Յեղասպանութեան սարսափն աչքի առջեւ ունենալով՝ Հայը դարձեալ դէպի Աստուած գնաց, դէպի փրկչական խաչը գնաց, որը դարձաւ լոյսի եւ յոյսի փարոս իր ճանապարհին:

Նայեցէ՛ք Կիլիկիայէն, Սասունէն, Զէյթունէն, Վանէն, Մուշէն, Ուրֆայէն գաղթած, Յեղասպանութենէ վերապրածներուն, որոնք ոչինչէն տուն շինեցին Սիւրիոյ, Լիբանա-

նի, Պոլսոյ, Աւստրալիոյ, Ամերիկայի եւ վերջապէս Հայաստանի մէջ: Անոնք չմոռցան իրենց լեզուն, խօսքը, այլ թշնամիի յաթաղանէն Աստուածաշունչը, աղօթարանները պահելով՝ աղօթքը ժառանգեցին իրենց սերունդներուն: Հայը չյաղթուեցաւ, Հայը ապրեցաւ, որովհետեւ, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Ո՞վ կրնայ մեզի զատել Աստուծոյ սէրէն՝ որ Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմով է. ո՛չ նեղութիւնը, ո՛չ անձկութիւնը, ո՛չ հալածանքը, ո՛չ սովը, ո՛չ մերկութիւնը, ո՛չ ալ սուրը» (Հռոմ. 8:38-39):

Ամէն տարի այս օրը՝ Ապրիլ 24-ին, աշխարհի մէջ ուր Հայ կայ մոմերով, դրօշներով, աղօթքով երթեր կ'ընեն ի յիշատակ Հայոց ցեղասպանութեան, ինչպէս որ երէկ մենք ըրինք Երուսաղէմի մէջ: Հայոց ցեղասպանութիւնը չմոռնալու, այն յաւիտեան յիշելու եւ պահանջելու համար աշխարհի բոլոր Հայերը պէտք է իրենց մայրենին սորվին, պէտք է Կոմիտասի շարականներն ու երգերը երգեն, Լուսաւորչի եւ Քրիստոնէութեան տարածման պատմութիւնը սերտեն:

110 տարի անցած է եւ մենք տակաւին կը սպասենք Հայու թափուած արեան գինը վճարելուն, Հայ դատի արդար լուծումին: Մինչդեռ Արաքսէն անդին որք ու ամալի կը մնան մեր տունն ու տեղը, սրբավայրերը, երբեմնի հայրենիքը, որ աւեր ու խոպան դիակի մը պէս գիշակերներու ոտքերու կոխան դարձած է:

Այսքան տարի անց իբրեւ արիւնէն եւ մեծ արհաւիրքէն ճողոպրած ազգի մը բեկորներ՝ ցրուած ի Սփիւռս աշխարհի, պարտինք պահպանել ու զարգացնել մեր լեզուն, մեր կրթութիւնը, զարկ տալ գրականութեան, հետեւիլ աւանդութիւններուն եւ փարիլ Եկեղեցիին:

Ամբողջ դար մը եւ աւելի, տակաւին ազգովին մինակ ենք յիշատակին հետ մեր ահաւոր կորուստին, մեր պատմական հայրենիքին, մեր մեռելներուն եւ մանաւանդ մեր քար ու քանդ եղած ճարտարապետական կոթողներուն: Այո՛, անոնք այսօր կու գան անգամ մը եւս յաճախելու մեզ եւ վերյիշեցնելու թէ իրենք ի զուր տեղը չէր որ տուին իրենց կեանքերը: Իրաւունք ունէր Եուկոսլաւ մեծ գործիչը, երբ կ'ըսէր. «Հաւատա՛ Հայ ժողովուրդ, երբ օր մը մարդկութիւնը սթափի իր այժմու բարոյական թմբիրէն, գութ չէ որ պիտի ունենայ քու նկատմամբ, այլ... հիացում»: Եւ այն օրը, երբ մենք թափանցենք փոխադարձ յարգանքի եւ սիրոյ գերագոյն գաղտնիքին, այն ատեն մեր սրբազան նահատակները պիտի ունենան հոգիի յաւիտեանական խաղաղութիւն եւ պիտի կարենանք ճակատաբաց ըսել թէ մենք մեզմէ ակնկալուածը լիովին ըրած ենք ու կատարած մեր խղճի պարտքը: Այն ատեն միայն իրաւունք պիտի ունենանք ըսելու, թէ եւ սուգի օր մըն է որ կ'ապրինք, բայց փառքի տօն մըն է որ կը տօնենք:

Աղօթենք սիրելիներ եւ խնդրենք Հայոց ցեղասպանութեան վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց նահատակուած սուրբերուն բարեխօսութիւնն առ Աստուած, որ գթայ մեր ազգին, պահէ եւ պահպանէ մեզի նոր փորձութիւններէ: Եւ չմոռնանք երբեք՝ թէ ո՞վ ենք մենք. որդի՛ Խաչի, զաւակ՝ Աստուծոյ, ժառանգ՝ Լուսոյ, որ պարտինք փառաւորել Հայրը, Որդին եւ Ս. Հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, յաւիտեանից: